



Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը
կը դատապարտէ Հալէպի մահափորձեր

10.02.2012 թ.

Այսօր առաւօտեան, Սուրիոյ Հալէպ քաղաքի մէջ տեղի ունեցած պայթիւններուն, զոհ գնաց մօտ 25ամեայ Վիզէն Հայրապետեան:

Համալսարանական Վիզէն Հայրապետեանը պայթիւնի հետեւանքով վնասուածքներ ստանալէն ետք, տեղափոխուած է հիւանդանոց, ուր անհարժեշտ եղած է զինք վիրահատել, սակայն անոր կեանքը փրկել չեն յաջողած:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութիւնը, Արեւմտեան Հայաստանի աշխարհասփյուռ հայութեան անունից կը ցավակցէ եւ միաժամանակ, իր զորակցութիւնը կը հայտնէ Ձեզ, հարգելի ծնողքներ:

Կը կիսենք Ձեր վիշտն ու ցավը, կը մաղթենք տոկունութիւն եւ ոգու արիութիւն, կը հայտնենք մեր զորակցութիւնը:

Հարգանքներով՝

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի Նախագահ՝
Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարութեան Վարչապետ
Տիգրան Փաշաբեզեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ

stat.gov.wa@haybachdban.org